

## **ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄԱՌՈՇՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԻ ՀՊԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐ**

### **ՍԱՅԱԿ ՀՈՎՐԱՆՆԻՍՅԱՆ**

21-րդ դարում մասնագիտություն ընտրելու խնդիրը նոր հնչեղություն և արդիականություն է ձեռք բերել: Յիմնախնդրի այժմեականությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով:

Առաջին՝ մի կողմից նոր սոցիալ-տնտեսական փորձը դեռևս լիովին յուրացված չէ, իսկ նոր մասնագիտությունները դեռ վերջնական գրանցում չեն ստացել հասարակական գիտակցությունում (օրինակ՝ շատերը դժվար թե առանց հիմնավոր գրադարանային պատրաստության կարողանան ասել, թե ինչով են զբաղվում «քոփիուայթերը», «մեղիաբայերը» կամ «մերչենդայգերը»): Մյուս կողմից, մենք մասնագիտացումների ավանդական ձևերի կարծրատիպերը կոտրելու բարդ ու ցավագին գործընթացի վկաներն ենք: Եթե նախկինում ընդունված էր մասնագիտական կողմնորոշման հարցում ընդօրինակել ծնողներին՝ ավանդաբար «ժառանգելով» նրանց մասնագիտությունները, ապա այժմ իրավիճակը կտրուկ փոխվել է, և տեղեկատվական նորագույն միջոցների շնորհիվ երիտասարդ սերունդը ավելի հաճակողմանի պատկերացում ունի հեռանկարային ու անհեռանկարային մասնագիտությունների և դրանց սոցիալական կարգավիճակի հնարավոր փոփոխությունների մասին:

Երկրորդ՝ կյանքի հարաշարժ ընթացքը իր շրջապտույտի մեջ է առել նաև մասնագիտությունների աշխարհը՝ այն դարձնելով առավել դիմամիկ ու փոփոխական: Բավական է նշել, որ ամեն տարի ի հայտ են գալիս մոտ 500 նոր մասնագիտություններ, և մոտավորապես այդքան էլ անհետանում են: Դրա հետ մեկտեղ՝ շատ մասնագիտություններ այսօր «ապրում են» միայն 5-15 տարի, որից հետո՝ կամ «մահանում», կամ անճանաչելիորեն փոխվում են<sup>1</sup>: Այս պայմաններում արդեն բավարար չէ միակ-եզակի մասնագիտության տիրապետելը: Մեր ժամանակներում պահանջված են այն մասնագետները, ովքեր տիրապետում են մի քանի բարդ մասնագիտությունների և ունակ են հաջողությամբ գործունեություն ծավալելու սոցիալ-տնտեսական դիմամիկ պայմաններում:

Երրորդ՝ վերահնաստավորվում և վերարժնորվում են մասնագիտության՝ որպես մասնագիտական գործունեության ըմբռնումները. այն որոշակի նպատակից (լինել երաժիշտ, ձեռնարկատեր, բժիշկ, հոգեբան) աստիճանաբար փոխակերպվում է որոշակի կենսակերպի ձեռքբերման միջոցի («ապրել, ինչպես ապրում են երաժիշտները, շոու-թիզնեսի ներկայացուցիչները, աստղերը, նոր հայերը»): Այս աններդաշնակության պտուղնե-

<sup>1</sup> Տե՛ս «Психологическое сопровождение выбора профессии: Научно-методическое пособие.» М., 2003, էջ 5:

որ դրսևորվում են կենսական գերակայությունների ու արժեքների փոփոխմանք, «ոչ թե լինելու», այլ «ապրելու» ձգտմանք՝ ստեղծագործականից զվարճալի կենսական ձևաչափին անցնելով:

Մասնագիտական ընտրության շեմին կանգնած մարդիկ տարբերվում են շրջապատող աշխարհի պահանջներին համապատասխան իրենց հնարավորությունները գնահատելու և իրենց ճանաչելու ձգտմանք: Մասնագիտական ինքնագիտակցության զարգացման հարցում առավել զգայունակ են հատկապես ավագ դպրոցականները:

Յուրաքանչյուր շրջանավարտ, մտածելով իր ապագայի մասին, առաջին հերթին որոշում է, թե ինչ մասնագիտություն ընտրի: Կյանքի այդ առանձնահատող շրջանում հոգեբանները (կամ մեծահասակները) անգնահատելի ծառայություն կմատուցեն դեռահասներին, եթե օգնեն նրանց տիրապետելու ինքնուրույն մասնագիտություն ընտրելու հմտություններին: Ֆիշտ ընտրված մասնագիտությունը մեծացնում է մարդու ինքնահարգանքը և դրական վերաբերմունքը իր հանդեպ:

Մասնագիտություն ընտրելու հայտնի բանաձևն ունի երեք չափանիշների՝ «ուզում են», «կարող են» և «պետք է», իհանալի գուգակցում<sup>2</sup>:

Մասնագիտության ինքնուրույն և պատասխանատու ընտրությունը դիտվում է կենսական ինքնորոշման հետևանք ու մասնավոր դեպք: Եթե խոսում ենք մասնագիտական ինքնորոշման մասին, ապա միշտ նկատի ենք ունենում նաև կենսական ինքնորոշումը: «Եսկ մասնագիտության ճիշտ և իմմակարգած ընտրությունը ենթադրում է առնվազն չորս գործոնների հաշվառում».

- անհատական առանձնահատկություններ,
- աշխատաշուկայի իրավիճակ (ինչ մասնագիտություններ են պահանջված ներկա պահին),
- ընտրվող մասնագիտության և ուսումնական հաստատության մասին տեղեկացվածություն,
- ենթադրվող ընտրության վերաբերյալ շրջապատի (ծնողների, ուսուցիչների, ընկերների և այլոց) կարծիք»<sup>3</sup>:

Սակայն մասնագիտության ընտրությունը մասնագիտական կայացման քարտ, երկարատև, շարժուն ու հակասական գործընթացի միայն սկիզբն է: Այդ գործընթացում S. V. Կուլդրյավցևն առանձնացնում է չորս շրջան:

1. *Մասնագիտական մտադրությունների ծագում և ձևավորում*: Այս փուլի հաջող իրականացման հոգեբանական չափորոշիչը աշխատաշուկայի, հասարակական և անձի մասնագիտական պահանջնունքների միջև հանապատասխանություն գտնելն է:

2. *Մասնագիտական կրթություն և դաստիարակություն*: Այս փուլի հաջողության հոգեբանական չափորոշիչը անձի մասնագիտական ինքնորոշումն է, այսինքն՝ իր իսկ ընտրած մասնագիտության և մասնագիտական ուղղվածության սուբյեկտի հանդեպ վերաբերմունքի ձևավորումը:

3. *Ակտիվ ներխուժում մասնագիտական միջավայր և մասնագիտական պարտականությունների կատարում*: Այս փուլի հաջողության հոգե-

<sup>2</sup> Стру Тюшев Ю. В. Выбор профессии: тренинг для подростков. СПб., 2009, № 5, 121:

<sup>3</sup> "Тесты по профориентации для учащихся". Минск, 2008, с. 13.

բանական չափորոշիչը մասնագիտության ակտիվութեն տիրապետելն է իրական աշխատանքային գործընթացի ու արտադրական հարաբերությունների պայմաններուն և իր տեղը գտնելը աշխատանքային կոլեկտիվ-ների հանակարգում:

4. *Անձի հնարավորությունների և մասնագիտական ձգտումների իրականացում ինքնուրույն աշխատանքում* (լրիվ կամ մասնակի): Այս փուլի հաջողության համար իրապես ճակատագրական է առաջին շրջանը՝ ապագա մասնագիտության ընտրությունը:

Գործնական մասնագիտական կողմնորոշման թույլ տեղերից մեկը հաճախ դրա անհետաքրքրական լինելն է դպրոցականների համար, ինչն ուղղակիորեն պայմանավորված է ակտիվացնող ընթացակարգերի և մեթոդիկաների անբավարարությամբ, որոնք թույլ կտային դեռահասին խորհրդատուի հետ միասին ընդգրկել մասնագիտական ինքնորոշման խնդիրները լուծելու գործընթացի մեջ: Ընդ որում, որոշ հոգեբաններ և մանկավարժներ ոչ միշտ են ձգտում համագործակցել խորհրդատվության կարիք ունեցող դպրոցականների հետ և մասնագիտական-խորհրդատվական աշխատանք են կատարում առանց իրենց հետաքրքրվածության ու առանձնահատուկ ցանկության: Դրույթունը լրջանում է նաև այն պատճառով, որ հատուկ պատրաստված մասնագիտական խորհրդատունների խիստ անբավարարության դեպքում այս աշխատանքը երբեմն հանձնարարում են նրանց, ովքեր ի սկզբանե դրան լուրջ չեն վերաբերվում<sup>4</sup>: Այս պիտի, ակտիվացնող մեթոդներին դիմելը բխում է ոչ միայն մասնագիտական կողմնորոշիչ պարապնունքների հանդեպ դեռահասների թույլ հետաքրքրությունից, այլև բարդ մասնագիտական խորհրդատվություն իրականացնող գործնական հոգեբանների աշխատանքն ավելի հետաքրքիր ու նշանակալից դարձնելու, հարստացնելու ձգտումից:

Կոնկրետ մասնագետի հայեցակարգային դիրքորոշումը հաճախ ոչ միայն ընկած է նրա կողմից այս կամ այն մեթոդի ընտրության հիմքում, այլև էականորեն ազդում է որոշակի հայեցակարգային մոտեցումներին վերաբերող մեթոդիկաների օգտագործման և արդյունքների մեկնաբանման վրա: Օրինակ՝ որոշ մասնագետներ, ովքեր սովոր են աշխատել ախտորոշիչ ավանդույթով, ոչինչ չեն կամենում տեսնել, բացի մեթոդիկայի հոգեբախտորոշիչ արդյունքից, իսկ այն մասնագետները, ովքեր գերադասում են հենվել մասնագիտական խորհրդատվության հոգեբերապետիկ պահերի վրա, «մեկատում են» միայն մեթոդիկայի շտկողական հնարավորությունները:

Ու թեև իրական մասնագիտական կողմնորոշիչ աշխատանքում հոգեխատորոշման, հոգեշտկողական, տեղեկատվական և այլ մոտեցումները միահյուսված և փոխկապակցված են, այսուհանդերձ ակտիվացնող մեթոդների յուրահատկությունն ավելի լավ հասկանալու համար, հարկ ենք համարում քննարկել դեռահասին մասնագիտախորհրդատվական օգնություն ցուցաբերելու ավանդական մոտեցումները: Քննարկվող մարտավա-

<sup>4</sup> Стю Володарская И. А., Лизунова Н. М. Система подготовки психологов в США // «Вестник Московского университета». Серия 14. 1989, № 3, № 50-62:

րությունները առանձնացրել ենք Ի. Վ. Միխայլովի, Յու. Վ. Ռևկեի, Ի. Ս. Կոնդակովի և Ա. Վ. Սուխարկի ընդհանրացումների հիման վրա<sup>5</sup>:

Հասարակական գիտակցությունում արմատացած և առավել գործածական է թեստաբանական մոտեցումը, որը հիմնված է նաև ազիտության պահանջների և թեստերի օգնությամբ մարդու դուրս բերվող որակների համարդության վրա (Ֆ. Պարսոնս, Գ. Մյունստենբերգ, Յ. Ջիլբուխ): Սակայն հաճախ հնարավոր չի լինում կազմել մասնագիտությունների կոնկրետ պահանջների ամբողջական ցանկը, ինչպես նաև հաշվարկել մարդու անհատական-հոգեբանական առանձնահատկությունների կայունությունը<sup>6</sup>: Բայց պետք է ընդունել, որ աշխատանքի յուրահատուկ պայմաններով մասնագիտությունների դեպքում (ավիացիոն, օպերատորական-դիսպեչերական և այլն) հավակնորդների մասնագիտական պիտանելիությունը որոշելու համար անհրաժեշտ է օգտագործել հատուկ ախտորոշիչ միջոցներ:

Այս մոտեցումը երբեմն կոչում են նաև «ախտորոշիչ»՝ «ախտորոշիչ-տարբերակող»՝, «հավաստող-հանձնարարական» և այլն, սակայն «թեստաբանական» անվանումը ընդգծում է, որ այստեղ հիմնական մեթոդը թեստերն են՝ միօրինակացված փորձերը, որոնք որոշակի ալգորիթմով համակարգում են հոգեբանի գործունեությունը և սահմանափակում մասնագիտություն ընտրողների ստեղծագործական ինքնարտահայտումը: Հատկանշական է, որ զարգացած երկրներում մի շարք միօրինակացված մեթոդիկաների անցկացումը հանձնարարվում է հոգեբանների ասխատենտներին<sup>7</sup>:

Մասնագիտական խորհրդատվության հաջորդ ուղղությունը պայմանականորեն կարելի է անվանել «խորքային» (Զ. Ֆրոյդ, Ու. Մոգեր, Մ. Կլելլանդ, Է. Ոտու): Այս մոտեցման հիմքում ընկած է այն ենթադրությունը, որ կյանքի և մասնագիտական ուղղությունը կապված է նախասկզբնական հոգեդիմամիկ գոյացությունների և մարդուն որոշակի տեսակի կենսագործունեության մոդը ներքին ուժերի (մանկական բնագիտներ, վախեր, ձեռքբերումների պահանջնունքներ և այլն) հետ: Ընդ որում, մասնագիտություն ընտրողին ցուցաբերած օգնության որակը որոշվում է նրանով, թե հոգեվերլուծական գրույցի ընթացքում հոգեբանին որքանով է հաջողվում օգնել երիտասարդին գիտակցելու այդ ամենը: Այսպիսի մոտեցման բացարձակացումը հանգեցնում է իրավիճակի վրա ազդելու հնարավորությանը, իր ուժերի հանդեպ ունեցած հավատի նվազեցմանը, ինչպես նաև հոգեվերլուծարանից «նարկոտիկական» կախվածությանը:

Դացիոնալիստական մարտավարությունը նախատեսում է աշխատանքի այնպիսի կազմակերպում, որի դեպքում կենսական և մասնագիտական ուղին «հաշվարկվում է» այդ ուղղու հատակ ուրվագծի կամ մոդելի հիման վրա: Օրինակ՝ ենթադրվում է, որ ժամանակակից պատմամշակութային հա-

<sup>5</sup> Տես **Михайлов И. В.** Опыт активизации профессионального самоопределения старшеклассников. Автограф. дис. канд. психол. наук. М., 1975, Укке **Ю. В.** Психологические концепции профессиональной ориентации в США. Автограф. дис. канд. психол. наук. М., 1972, **Кондаков И. М., Сухарев А. В.** Методологические основы зарубежных теорий профессионального развития // «Вопросы психологии», 1989, № 5:

<sup>6</sup> Տես **Борисова Е. М., Гуревич К. М.** Психологическая диагностика в школьной профориентации // «Вопросы психологии», 1988, № 1, էջ 79:

<sup>7</sup> Տես **Володарская И. А., Лизунова Н. М.**, նշվ. աշխ., էջ 50-62:

մայնքի յուրաքանչյուր անդամ իր զարգացման ընթացքում անցնում է որոշակի փուլեր, որոնք ունեն իրենց յուրահատկությունը և պահանջում են կատարել որոշակի արարքներ ու գործողություններ (Դ. Սյուլեր, Ե. Գինցբերգ, Ե. Կլիմով): Յաճախ դա կապվում է մարդու «ինքնահասկացման» մշակման և իրեն այս կամ այն անձնային տիպին հարաբերակցելու (համեմատելու) հետ (Դ. Շոլլանդ): Որոշում ընդունելու և սպասվելիք հաջողության համատեքստում այլընտրանքային տարբերակներից դեռահասին առաջադրվում են մասնագիտություն ընտրելու տարբեր ձևեր (Բ. Դիտոց, Լ. Թեյլոր, Յ. Թոմե, Դ. Տիրելման, Օ. Շարոա): Այս մոտեցման բացարձակացումը կարող է հանգեցնել հոգեֆիզիոլոգիական և անձնային գոյացությունների անտեսմանը (չիաշվարկմանը), որոշում ընդունելու ուրվագծերի և ալգորիթմների գերազանահատմանը, որոնք ոչ միշտ են հարաբերակցվում իրականության հետ: Առանձնահատուկ գգուշություն պետք է դրսևորել համակարգչային «խորհրդատուններ» օգտագործելիս, որոնք ոչ միայն ունակ են նպատակահարմար որոշում ընդունելու մասնագիտություն ընտրողի փոխարեն, այլև, ինչն ավելի վատ է, հեռանկարում դեռահասի մեջ կարող են ձևավորել «համակարգչային մտածողություն» այդչափ բարդ հարցեր որոշելիս:

Հումանիստական մոտեցումը ենթադրում է օգնություն մարդուն՝ մասնագիտական աշխատանքում լիարժեք ինքնիրացման (իր «Ես» կերպարի իրացման) գործում (Դ. Սյուլեր): Մասնագիտական զարգացումը դիտվում է որպես անձի ընդհանուր զարգացման կարևորագույն մաս (Ա. Մալոու): Այս ուղղությունը ներժում է որևէ բռնություն և ձեռնածություններ մասնագիտություն ընտրող դեռահասների հանդեպ: Ընդունված է, որ յուրաքանչյուր մարդ բնույթով ի սկզբանե մարդասեր է և նախորոշված է ծառայելու բարուն, իսկ այդ հանրօգուտ պահանջնունքի (մասնագիտության և աշխատանքի) իրականացման ուղու ընտրությունը անձի ազատության և ինքնարտահայտման բարձրագույն դրսևորումն է: Սույն մոտեցման ամբողջ գրավչությամբ հանդերձ՝ պետք է ընդունել, որ իրական կյանքում մշտապես առաջանում է բախում առանձին մարդու և հասարակության պահանջմունքների միջև, և ինչ մարդը միանշանակ չէ (հակասական է): Սակայն հատկապես այդպիսի հակասությունները հաճախ ինչպես առանձին անձի, այնպես էլ ընդհանրապես հասարակության զարգացման պայման են:

Դաստիարակչական (զարգափարախոսական) մոտեցումը ենթադրում է որոշակի քաղաքացիական դիրքի ձևավորում ու իրականացում և, որպես կանոն, ուղղակիորեն պայմանավորված է տվյալ հասարակությունում կամ սոցիալական խմբում տիրապետող գաղափարախոսական դիրքորոշմանը (Յ. Ազարով, Ե. Կլիմով, Ա. Մակարենկո, Մ. Տիտոմա, Բ. Ֆեդորիշին): Օրինակ՝ անցյալում դա «քագավորին, տիրոջը (Աստծուն) կամ հայրենիքին ծառայելն» էր, իիմա տարբեր հասարակական-տնտեսական և մշակութային համակարգերում դա կարող է լինել «կյանքին հարմարվելը» («ինել ինչպես բոլորը», «չառանձնանալ», «իմանալ քո տեղը»), «բարեկեցության ձգտելը» («շրջանցել մյուսներին», դառնալ «գերմարդ կամ գերաստդ»), «բարձր գաղափարներին ծառայելը» (գիտական, բնապահպանական, կրոնական, գեղագիտական, տնտեսական...), «ապրել հանուն ուրիշների բարօրության» («երջանկությունը պայքարի մեջ է», «լինել այն-

տեղ, ուր դժվար է...») և այլն: Այսպիսի մարտավարությունը սովորաբար իրականացվում է պաշտոնական և ոչ պաշտոնական սոցիալական կրթության ամբողջ համակարգին մասնակցելիս (բացահայտ կամ ոչ բացահայտ): Այս համակարգի տարրերից է նաև այս կամ այն աշխարհընկալման դիրք ունեցող կոնկրետ մասնագիտական խորհրդատուն: Դաստիարակչական նոտեցուն այսպես հասկանալու դեպքում այն կարող է կոչվել գաղափարախոսական կամ աշխարհընկալական:

Ակտիվացնող (*ձևավորող, զարգացնող*) մոտեցումը իիմնական նպատակ է համարում դեռահասի պատրաստությունը ինքնուրույն և գիտակցված մասնագիտական ու կենսական կողմնորոշմանը, այսինքն՝ իր հետաքրքրությունների, հնարավորությունների, հասարակության բարոյական-արժեքային պահանջմունքների և կողմնորոշումների հաշվառմանը ճակատագիրը նախազգելու կարողության ձևավորումը (Ե. Կլիմով, Ի. Կոն): Այս մոտեցման իրականացումը երկարատև ու շատ բարդ գործ է, քանզի գաղափարապես ենթադրվում է, որ մասնագիտություն ընտրողն իր խնդիրները պետք է լուծի ոչ վատ, քան պրոֆեսիոնալ հոգեբանը (կարծես հոգեբանը դեռահասից տարբերվում է նրանով, որ ունակ է օգնելու ուրիշներին, իսկ դեռահասը՝ ինքն իրեն...):

Դպրոցականի մեջ այսպիսի կարողության ձևավորումն անհնար է առանց խորհրդատուի հետ իրական փոխներգործության, և առանց նրանց համատեղ «մտորելու» ու ներքին ակտիվության գրեթե միևնույն աստիճանի՝ մասնագիտական կողմնորոշման խնդիրները լուծելու ընթացքում: Տվյալ մարտավարություն ուղղված է ոչ այնքան կոնկրետ խնդիրների (մասնագիտության ընտրություն, պահեստային տարբերակի ընտրություն, որոշակի մասնագիտական կարևոր որակների ստուգում և այլն) անհապաղ լուծելմանը, որքան կենսական և մասնագիտական ինքնորոշման տարբեր, փոփոխվող իրադրություններում երիտասարդի ինքնուրույն կողմնորոշվելու պատրաստությանը (կողմնորոշման մեթոդին): Բնական է, որ այսքան բարդ նպատակը ենթադրում է փոփոխապակցված հոգեբանամանկավարժական միջոցների ամբողջական համակարգ և մասնագիտական կողմնորոշիչ այլ մարտավարությունների մասնակի իրականացում:

Կարելի է նաև առանձնացնել «մասնակի ծառայություններ» պայմանական անվանումով մոտեցումը: Լիակատար տարբերակով՝ այսպիսի մոտեցման իիմքում ընկած գլխավոր նախադրյալը ենթադրությունն է այն մասին, որ ավելի արդյունավետ է մասնագիտությունը ընտրողին օգնել փոքր խորհուրդներով, ժամանակին հաղորդել ուսումնական հաստատությունների և մասնագիտությունների առանձնահատկությունների մասին անհրաժեշտ տեղեկատվություն, անցկացնել ընտրական հոգեախսորոշում հենց դեռահասների և նրանց ծնողների հարցումներով: Իսկ աշխատատար ծրագրերը, օրինակ՝ դպրոցականների ինքնուրույն և գիտակցված ինքնորոշման պատրաստությունը, համախոհների կողմից ճանաչվում են անարդյունավետ և նույնիսկ ինքնախրացման ազատության սկզբունքին հակասող, քանի որ անձը եւկան ներգործության է ենթարկվում, մինչդեռ «մասնակի ծառայությունների» դեպքում այդպիսի ներգործություն կարծես թե չկա, և հենց դեռահասն է որոշում, թե իրեն ինչպիսի օգնություն է անհրաժեշտ:

Եթե ուշադրություն դարձնենք հենց մասնագիտություն ընտրողների պահանջներին, ապա մասնագիտական խորհրդատվությունից նրանց առավել բնորոշ են հետևյալ սպասումները. «Ուզում եմ, որ Դուք օգնեք ինձ ընտրել մասնագիտություն», «Չգիտեմ, թե ինչ եմ ուզում...», «Չգիտեմ, համապատասխանում եմ արդյոք ընտրված մասնագիտությանը», «Վստահ չեմ, որ կընդունվեմ», «Ծնողներս մի բան են ուզում, իսկ ես՝ այլ», «Չգիտեմ, թե ես ինչի եմ ունակ ընդհանրապես» և այլն: Որոշ դեռահասներ հաճախ խոստովանում են, որ «մասնագիտական խորհրդատուին դիմել իրենց ստիպել են ծնողները, իսկ թե ինչո՞ւ՝ անհասկանալի է...»: Մասնագիտություն ընտրողները հազվադեպ են դիմում արդեն կատարված ընտրությունը վերստուգելու կամ որոշ պահեր ճշգրտելու խնդրանքով: Գործնականում եզակի են այն դեպքերը, երբ դեռահասները (կամ նրանց ծնողները) ցանկանում են սովորել, թե ինչպես ճիշտ ընտրել մասնագիտություն և խնդրում են հոգեբանին օգնել իրենց հենց դրանում, ինչը կհամապատասխաներ այն հին ճշճարտությանը, որ «ավելի լավ է նարդուն սովորեցնել ինքնուրույն ձուկ բռնել, քան մեկ անգամ կուշտ կերակրել...»<sup>8</sup>:

Զևավորող մասնագիտական խորհրդատվությունում դպրոցականների և նրանց ծնողների հետ նախասկզբնական հարցում չանցկացնելը բացահայտորեն չի նպաստում դրա զարգացմանն ու տարածմանը, հատկապես տնտիհաշվարկային խորհրդատվության պայմանների դեպքում, երբ առավելագույն արտաքին բավարարվածությունը (փոխստաբորդ) ձեռք է բերվում սեղմ ժամկետներում և նվազագույն ջանքերով: Հարկ է նշել, որ հաճախ արդեն հենց խորհրդատվության ընթացքում պարզվում է, որ մասնագիտություն ընտրողներն առհասարակ են չին չին սովորել ինքնուրույն լուծել իրենց խնդիրները, բայց կասկածում էին, որ չի ստացվի...

Կոնկրետ մասնագետների կողմից այս կամ այն մասնագիտախորհրդատվական մարտավարության օգնությանը դիմելը պայմանավորված է մի շարք հանգանանքներով՝ աշխատանքի անհատական ոճ, մեթոդական նախապատվություն, մասնագիտական որակավորում, աշխատանքային պայմաններ, տիրապետող գիտական դիրքորոշումներ, գաղափարախոսություն և այլն:

Իհարկե, «կատարելապես» առանձնացված մարտավարությունները հազվադեպ են, այդ պատճառով էլ դժվար է այս կամ այն հեղինակին միանշանակ համարել որևէ ուղղության հետևորդ, քանզի մասնագիտական զարգացման ընթացքում փոխվում են նաև մասնագետների հայեցակարգային դիրքորոշումները: Պայմանականորեն առանձնացված մարտավարություններից ցանկացածն ունի իր առավելությունները և թերությունները, այդ պատճառով կատարյալ կլիներ այնպիսի մարտավարությունը, որը կամբողջացներ բոլոր խելամիտ և արդյունավետ տարրերը: Մեր կարծիքով, հեռանկարային է համարվում ակտիվացնող (ձևավորող, զարգանող) մոտեցումը, որը դեռևս հետագա զարգացման ու կոնկրետ մեթոդիկաներով հարստացման պահանջ ունի:

<sup>8</sup> **Տյոշես ՅՕ. Բ.**, նշվ. աշխ., էջ 6-7:

Այսպիսով, մասնագիտական կողմնորոշման խնդիրները լուծելու համար խորհրդատուի և մասնագիտություն ընտրողի (օպտամուտի) ընդիանուր պատրաստության տեսակետից կարևորվում է նրանց ակտիվությունը:

Ակտիվացնող ընթացակարգերի էությունը լավ հասկանալու համար անհրաժեշտ է ճշգրտել «ակտիվություն» հասկացությունը մասնագիտական խորհրդատության գործընթացի կազմակերպման համատեքստում: Ակտիվության տարբեր սահմանումների վերլուծությունը<sup>9</sup> հետագա դիտարկումների համար թույլ է տալիս առանձնացնելու մեկ նշանակալից բնութագիր՝ «գերնորմատիվությունը», «վերիրավիճակայնությունը»<sup>10</sup>, մարդու պատրաստականությունը ոչ միայն ինքնուրույն և գիտակցված կատարելու տարբեր արարքներ ու գործողություններ, այլև ձգտելու նորին, արդեն իրականացվող գործունեության շրջանակներում չնախագծվածին: Ակտիվության այսպիսի ընթացնումը պայմանավորված է անձի ստեղծագործական ինքնարտահայտմաբ, ինչը հատկապես կարևոր է կենսական և մասնագիտական անկրկնելի հեռանկարների ամբողջական կառուցման համար, որոնք մարդու կյանքն իւկապես դարձնում են յուրօրինակ և հենց այդ պատճառով էլ՝ արժեքավոր:

Դեռահասին իր կյանքի անկրկնելի ուղին նկատելուն օգնող հոգեբանի ակտիվությունը նույնպես ենթադրում է նրա պատրաստ լինելը ոչ միօրինակ, ստեղծագործական գործողությունների՝ ընդ որում՝ չսահմանափակելով մասնագիտություն ընտրողի ստեղծագործականությունը: Սակայն իրական մասնագիտախորհրդատվական պրակտիկայում այսպիսի ստեղծագործական ռեժիմով անընդհատ աշխատանքը քիչ հավանական է (առօրյա գործերի, հոգնածության, ժամանակի սղության և այլ պատճառներով), և այդժամ օգնել կարող են հատուկ ակտիվացնող տեխնոլոգիաները (մեթոդիկաները), որոնք հեշտացնում ու լավարարում են մասնագիտական խորհրդատուի և դեռահասի համատեղ ստեղծագործությունը:

Հոգեբանի առավելագույն ակտիվությունը ենթադրում է նրա՝ որպես մասնագետի առավել ամբողջական ստեղծագործական ինքնարացահայտումը, որտեղ օգտագործվող մեթոդիկան հանդես է գալիս որպես այդպիսի ստեղծագործության հնարավոր խթանից: Իսկ նվազագույն ակտիվությունը նշանակում է, որ հոգեբանը կարող է կատարել սովորական արդյունքներ «գրանցողի» կամ ուղղակի սարքավորումը «միացնողի» և «անջատողի» դեր, քանզի աշխատանքի հիմնական, անհրաժեշտ նաև «կատարում է» օգտագործվող մեթոդիկան, որի մշակման ժամանակ ինչոր մեկն արդեն դրսևորել է մասնագիտական ստեղծագործություն: Ընդ որում, աննշան շեղումը ընթացակարգի ալգորիթմից հանգեցնում է արդյունքների խեղաքյուրնան, դիտվում է որպես խարարում և կարող է նույնիսկ վկայել հոգեբանի մասնագիտական վատ պատրաստվածության մասին, օրինակ՝ միօրինակացված թեստեր օգտագործելիս հոգեչափական գրագիտության բացակայության դեպքում<sup>11</sup>:

<sup>9</sup> Տե՛ս Աբուլխանովա-Սլավսկայ Կ. Ա. Типология активности личности // «Психологический журнал», 1985. Т. 6, № 5, էջ 3-18:

<sup>10</sup> Տե՛ս Ասմոլով Ա. Գ., Պետրովսկի Վ. Ա. О динамическом подходе к психологическому анализу деятельности // «Вопросы психологии», 1978, № 1:

<sup>11</sup> Տե՛ս «Общая психодиагностика». М., 1987, էջ 21-22:

Օպտանտի առավելագույն ակտիվությունը ենթադրում է իր խնդիրները լուծելու ինքնուրույնության ու գիտակցվածության անընդհատ աճող աստիճան և կենսական ու մասնագիտական հեռանկարների կառուցում: Ընդ որում, խոսքը ոչ ցանկացած ակտիվության մասին է: Օրինակ՝ որոշ հոգեֆիզիոգիական փորձեր (հոգնածության, սթրեսակայունության) թույլ են տալիս հետազոտվողի էներգիայի ոչ պակաս վատնում, իսկ միօրինակացված բլանկային շատ հարցարերթեր դեռահասին ստիպում են պատասխանների մի քանի տարբերակներից ընտրություն կատարելու ժամանակային և այլ սահմանափակումների պայմաններում: Սակայն և էներգետիկ ծախսերը, և պատասխանների դժվարացված ընտրությունը օպտանտին թողնում են «պասիվ հետազոտվողի» դերում, քանի որ այլ կերպ նա կանաչական կիարնարվի ավելի գրավիչ (կամ շահեկան) արդյունքներին, ինչն անհնաստ է դարձնում նման մեթոդիկաների կիրառումը:

Ակտիվացնող ընթացակարգերում դեռահասի ստեղծարարությունը դրսևորվում է ոչ թե առանձին (վերացականորեն մեկուսացված) փորձերի-առաջադրանքների նկատմամբ, այլ իր մասնագիտական ճակատագրի հանդեպ՝ դրա որոշ նպատակայնությամբ և ամբողջականությամբ: Իհարկե, իսկական ակտիվացնող ձեռք է բերվում ոչ միշտ և ավելի շուտ հանդես է գալիս որպես մասնագիտական խորհրդատվության կատարյալ նպատակ: Օպտանտի նվազագույն ակտիվության արտահայտությունը խորհրդատվության ընթացքում նրա կողմից կատարվող այն գործողությունների իմաստն ամբողջովին չհասկանալու է, որոնք արտաքնապես կարող են բավականին «ակտիվ» թվալ և մեծ բավարարվածություն պատճառել դեռահասին:

Կատարված վերլուծության հիման վրա կարող ենք արձանագրել, որ այս կամ այն մասնագիտախորհրդատվական մարտավարություն, մեթոդ և, առավել ևս, կոնկրետ մեթոդիկա ընտրելիս օգտակար է գոնե մոտավորապես զնահատել դրանց ակտիվացնող հնարավորությունները՝ չմոռանալով նաև, որ ինքնին ակտիվացման գաղափարը ոչ մի չափով չի բացառում դեռահասի հետ աշխատանքի որոշ փուլերում համակարգված ընթացակարգեր օգտագործելը: Կարևոր է միայն, որ այդ ընթացակարգերը չդառնան տիրապետող և չխոչընդոտեն դպրոցականի ինքնուրույնության ձգտմանը: Եթե խորհրդատվության դիմած օպտանտը չի ձգտում գիտակցված ու ինքնուրույն մասնագիտական ինքնորոշման և համառորեն սպասում է, որ հոգեբանը «կընտրի մասնագիտություն իր համար», ապա պարտադիր ակտիվացնող կարող է ընկալվել որպես բռնություն, առավել ևս, որ օպտանտների փոքր մասի և նրանց ծնողների սպասումները մասնագիտական խորհրդատվությունից ենթակա և արտիկուլար կարող է լինել մասնագիտական փորձի և նրբանկատության վրա իհմնված ինքնուրույն մասնագիտություն ընտրել սովորելու հնարավորությունն ու անհրաժեշտությունը գիտակցելու դեռահասի սկզբուն վարքը: Այլ միջոցների (տեղեկատվության և գրավորի) կողքին սա կարող է աստիճանաբար փոխել մասնագիտական խորհրդատվական ծառայություն-

ների նկատմամբ հասարակական պահանջը, իիմնականում՝ դեպի հոգեբանների հետ փոխներգործության կողմնորոշումը:

Այսպիսով, դեռահասի մասնագիտական կողմնորոշիչ օգնության իմաստն այն է, որ հատուկ մեթոդական միջոցներ օգտագործող հոգեբանը միջնորդ է ինքնուրույն կյանք մտնող երիտասարդի ու հասարակության միջև։ Ընդ որում, եթե այդ միջնորդության ընթացքում տեղի է ունենում օպտամտի ակտիվացում, այսինքն՝ նրա գործողությունների գիտակցվածության և ինքնուրույնության մակարդակի բարձրացում, ապա ներառվելով հասարակության մեջ, որպես նրա հասուն անդամ, նա նպաստում է նաև իրեն դաստիարակող հանրույթի հոգեբանական մշակույթի բարձրացմանը։

**СААК ОГАНЕСЯН – Попытка психологического анализа концепций профориентации.** – В наши дни проблема выбора профессии актуальна, как никогда. Во-первых, с одной стороны, новые профессии еще не утвердились в общественном сознании, с другой стороны, на наших глазах ломаются стереотипы традиционной профессионализации. Во-вторых, ныне рамки профессий чрезвычайно динамичны, изменчивы, поэтому овладеть одной профессией недостаточно. В-третьих, изменилось восприятие профессии как сферы деятельности, что проявляется в смене жизненных приоритетов и ценностей, в стремлении не “быть”, а “жить”, перейти от созидательного к развлекательному жизненному формату. В статье рассматриваются традиционные стратегии консультационной помощи подростку, которые помогут профконсультантам лучше осознать цели и задачи своей работы.

**SAHAK HOVHANNISYAN – An Attempt of Psychological Analysis of the Career Orientation Concepts.** – In the XXI century the problem of choosing a profession is relevant more than ever. Firstly, this is due to the fact that, on the one hand, new professions have not yet received a specific recognition in the public conscience; on the other hand, we are witnessing a process of breaking stereotypes related to the traditional forms of professionalization. Secondly, the world of professions has become extremely dynamic and changeable, which stipulates insufficiency to master only one profession. Thirdly, certain changes occurred in perception of the profession as a sphere of professional activity. The fruitage of such disharmony is manifested in the change of life priorities and values in an aspiration not to "be" but "live", to move from the creative to life entertainment format. This article deals with traditional strategies of vocational consulting help (for the teenagers), which will help vocational consultants to better understand the goals and objectives of their work.